5624

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«19» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 133 - 25

Նախաձեռնող՝ ***«Մոդուլ» ՍՊԸ***
Ք.Երևան, Նաիրի Զարյան փողոց, 22-3

Գործունեությունը՝ ***Նաիրի համայնքի Արագյուղ բնակավայրում միջնակարգ դպրոցի կառուցում***
Կոտայքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 133 - 25

«19» նոյեմբեր 2025թ.

Արագյուղ բնակավայրում միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Մոդուլ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /այսուհետ՝ ՇՄԱԳ/, նախագիծ
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Նաիրի համայնքի Արագյուղ բնակավայր

Ներածական մաս. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում Կոտայքի մարզի Արագյուղ բնակավայրում նախատեսվում է միջնակարգ դպրոցի /այսուհետ՝դպրոց/ կառուցման աշխատանքներ:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ անհատույց օգտագործման իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 1.1 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Միջնակարգ դպրոցը կառուցվելու է քանդման ենթակա հին դպրոցի, տարբեր շինություններով ծանրաբեռնված հողամասի սահմաններում: Տարածքի հարևանությամբ առկա են կառույցներ, ամենամոտ բնակելի տան հեռավորությունը կազմում է 20 մ: Ռելիեֆը հարթ է, աննշան թեքությամբ, բացարձակ նիշերը տեղամասում տատանվում են 1571-1572 մմ սահմաններում:

Հիդրոերկրաբանական տեսակետից մինչև 30 մետր խորությամբ ստորգետնյա ջրեր չեն բացահայտվել:

Նախատեսվող գործունեության տարածքը ամբողջովին ասֆալտապատ է, տարածքում բացակայում են պատմամշակութային և բնության հուշարձանները, ինչպես նաև զգայուն էկոհամակարգերը:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողատարածքի ընդհանուր մակերեսը՝ 1.1 հա

- կառուցապատման ընդհանուր մակերեսը՝ 2924.0 մ²,
- կանաչապատման ընդհանուր մակերեսը՝ 3500.0 մ²,
- անջրանցիկ ընդհանուր մակերեսը՝ 5576մ²:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է սեյսմիկ կարերով բաժանված 3 եռհարկանի և 1 մեկհարկանի մասնաշենքով դպրոց: Դպրոցը նախատեսված է 1-ից մինչև 12-րդ դասարանների համար, միչև 288 աշակերտի ուսումնական ծրագրերի դասընթացների կազմակերպման նպատակով:

Առաջին մասնաշենքում տեղակայված են տարրական դասարանները, ներաառական դասարանը, մարզասրահը, խաղասենյակը, շախմատի դասարանը, բժշկի սենյակը, և այլն: Այն եռահարկ է, առանց նկուղային հարկի:

Երկրորդ մասնաշենքը կենտրոնական մասնաշենքն է: Առաջին հարկում նախատեսված է մուտքային հարթակ թեքուղիներով, նախասրահ, հանդիսությունների դահլիճ, ճաշասրահ, տնօրենի աշխատասենյակը, մեկ վերելակ, երկրորդ հարկում ուսմասվարների /միջին և տարրական դպրոցնի/ աշխատասենյակներ և կաբինետներ: Երրորդ հարկում տեղադրված են գրադարանը, կաբինետներ և լինգաֆոնային կաբինետ: Կիսանկուղային հարկում տեղադրված է ճաշարանի խոհանոցը իր օժանդակ սենքերով:

Երրորդ մասնաշենքը միջին և ավագ դպրոցն է իր դասասենյակներով, կաբինետներով և սանհանգույցներով: Մասնաշենքը եռահարկ է, մի հատվածում այն երկհարկանի է: Այստեղ են գտնվում քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության կաբինետները: Նկուղային հարկում նախատեսված են հրաձգարան, սանհանգույցներ և օժանդակ տարածքներ: Դպրոցային համալիրի չորորդ մասնաշենքը՝ մարզադահլիճը հատակագծում ունի ուղղանկյան ձև առանցքային չափեր: Այն մեկհարկանի է մարզական գույքի սենյակով: Նկուղային հարկ չունի:

Նկուղային հարկի նախագծային լուծումները տիպարային նախագծի անփոփոխ լուծումներն են, որտեղ բացի նկուղային սրահ-տարածքից տեղակայված են սանհանգույց և օժանդակ սենքեր:

Միջնակարգ դպրոցն ապահովված է լինելու թեքահարթակներով, նախատեսված է հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների սենյակ, սանհանգույց և այլ միջոցառումներ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար:

Նախագծով դպրոցի բակում նախատեսվում է տեղադրել 119.88 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ կազմված 216 հատ 555 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներ: Շենքի էլեկտրամատակարարումը և դպրոցի էլեկտրաէներգիայի հաշվառումն իրականացվելու է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ փոխադարձ համաձայնության սկզբունքով՝ դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ: Արևային պանելների տեղադրումն իրականացվելու է համապատասխան սերտիֆիկատ ունեցող ընկերությունների կողմից, որոնց կողմից իրականացվելու է նաև հետագա սպասարկման և շարքից դուրս եկած վահանակների խոտանման աշխատանքները:

Դպրոցի ջերմամատակարարման նպատակով նախատեսվում է կաթսայատուն՝ գազի այրիչներով ավտոմատացված երկու 465/423կՎտ և մեկ 74 կՎտ ջերմային հզորությամբ կաթսայով: Կաթսայատունն ապահովված է ներածման և արտածման օդափոխության համակարգերով:

Նոր դպրոցը կառուցվելու է գործող դպրոցի տարածքում, որտեղ առկա են ինժեներական բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման և էլեկտրամատակարարման գծերը: Դպրոցի համար անհրաժեշը միացումներն իրականացվելու են ենթակառուցվածքները տնօրինող կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի հիման վրա:

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ ավտոկռունկ, էքսկավատոր, ավտոինքնաթափ և այլն: Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ, մետաղական կառուցվածքներ, ամրան, ավազ, ապակի, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը կանխելու նպատակով: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից ջուրն օգտագործվելու է աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, տրանսպորտային միջոցների անիվների լվացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Ջրօգտագործումն ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (45 մարդ), կկազմի 763.73 մ^3/շին.ժամ: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 5785 մ^3: Անիվների լվացման համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 630 մ^3 : Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 7179 մ^3/շին.ժամ: Ջրցանի և անիվների լվացման համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ջրատար մեքենայով՝ պայմանագրային հիմունքներով: Աշխատողների կենցաղային նպատակների համար օգտագործվելու է կից ճանապարհով անցնող համայնքային գոյություն ունեցող ջրագիծից:

Նախքան շինարարական աշխատանքները սկսելը ապամոնտաժվելու են նախատեսվող գործունեության տարածքում առկա բոլոր շինությունները: Ապամոնտաժվող շենքերը հիմնականում քարե կոնստրուկցիաներով շինություններ են, մետաղաթիթեղյա ծածկով: Քանդման արդյունքում առաջացող թափոնները տարանջատվելու են և կուտակվելու են առանձին: Օգտագործման համար պիտանի թափոնները տեսակավորվելու են, հանձնվելու են համապատասխան մասնագիտական կազմակերպություններին կամ տեղափոխվելու են աղբավայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում կատարվելու է հողային զանգվածի հանույթ, որից մի մասը կօգտագործվի հետլիցքի համար, իսկ ավելացած հողային զանգվածը շինարարական և քանդման աշխատանքներից գոյացած շին աղբի հետ միասին կտեղափոխվի Նաիրիի համայնքապետարանի կողմից հատկացված վայր: Կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից, իոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Նախատեսվում է շինարարական հրապարակին կից տեղադրել պլաստիկ տարա, որտեղ կուղղորդվեն անձրևաջրերը և արտադրական ջրերը: Պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանի համար, իսկ նստվածքը շին. աղբի հետ կտեղափոխվի աղբավայր:

Կենցաղային կեղտաջրերը ներքին ցանցի միջոցով հեռացվելու են դեպի ՏՈՊԱՍ-150 տիպի կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայան: Մաքրված ջուրը կայանից ինքնահոս կհեռանա դեպի դրենաժային հոր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները կիրականացվեն համաձայն Նաիրի համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության ռիսկեր նվազեցման նպատակով ՇՄԱԳ-ում նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- մթնոլորտային օդ աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների քանակական պարամետրերի չափումներ՝ ըստ անհրաժեշտության,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում՝ պարբերաբար,
- փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի արտահոսքը կանխելու համար,
- թափոնների տեղափոխման կազմակերպում՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա,
- նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում:

Պատճառաբանական եզրահանգումներ. Կոտայքի մարզի Արագյուղ բնակավայրում միջնակարգ դպրոցը կառուցման ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննական գործընթացը իրականացվել է բնապահպանական ոլորտը կարգավորող օրենսդրական պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ոլորտին առնչվող գերատեսչություններ, Կոտայքի մարզպետարանը, Նաիրի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Արագյուղ բնակավայրում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ: Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության և շահագործման փուլում, կրելու են ժամանակավոր բնույթ: Շահագործման փուլում ազդեցությունը կկրի սեզոնային բնույթ՝ կապված կաթսաըատան շահագործման հետ, որի ընթացքում արտանետվող նյութերի չափաքանակները կլինեն սահմանային թույլատրելի նորմայից ցածր:

Շահագործման ընթացքում շենքի կանաչ տարածքների և նորատունկ բուսականության խնամքը կիրականացվի դպրոցի կողմից, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումները, որի ընթացքում կպչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում խստորեն հետևել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի գործունեությանն

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

առնչվող շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված այլ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև արտակարգ իրավիճակների, տեխնիկական և աշխատանքի անվտանգության նորմերի պահանջներին:

- Ապահովել կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական և շինարարական նորմերի պահպանման նպատակով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Մոդուլ» ՍՊԸ - ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Արագյուղ բնակավայրի միջնակարգ կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ռուզան Մակինյան